**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-21-9/26-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 04 -ը 11 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **01.09.2021թ**. կնքված № **ԳՀԱՊՁԲ-21-9/26-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն **Հավելված № 1-ի և 2-ի:**

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***18,809,136 (տասնութ միլիոն ութ հարյուր ինը հազար հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ.:***

## 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ք. Երևան Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144129<br>ՀՎՀՀ 02522157<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ<br>Ք. Երևան, Արզումանյան 32<br>«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ<br>Հ/Հ 217002182558001<br>ՀՎՀՀ 01210095<br>տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ |

AH 0337548
Հ/- ԱԻՆՑՐՆ Սողոյան

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-9/26-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը՝ 2021թ., 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ. |
| 9 | Տպիչի թուղթ | հատ | 5 | 6,070 | 30,350 | 5 |
| 10 | Հեղուկի ֆիլտր Filter Fluid D13.8 | հատ | 1 | 18,480 | 18,480 | 1 |
| 15 | Ռեագենտ UF II Search-Sed (29mlX2) | լրակազմ | 5 | 221,400 | 1,107,000 | 5 |
| 16 | Ռեագենտ UF II Search-Bac (25mlX2) | լրակազմ | 5 | 243,000 | 1,215,000 | 5 |
| 19 | Կալիբրատոր UF II (2X47ml) | լրակազմ | 1 | 540,000 | 540,000 | 1 |
| 20 | Combur- 10 UX | հատ | 20000 | 226.80 | 4,536,000 | 20000 |
| 28 | Ռեակցիոն Տուփ | հատ | 3000 | 60 | 180,000 | 3000 |
| 30 | Բարձր զգայնության Տրոպոնին STAT100 թեստ | լրակազմ | 1 | 116,790 | 116,790 | 1 |
| 31 | ԱԿՏԳ 100 թեստ | լրակազմ | 2 | 190,740 | 381,480 | 2 |
| 32 | Լյուտեինիզացնող հորմոն 100 թեստ | լրակազմ | 4 | 53,550 | 214,200 | 4 |
| 33 | Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 100 թեստ | լրակազմ | 4 | 56,508 | 226,032 | 4 |
| 34 | թեստոստերոն 100 թեստ | լրակազմ | 4 | 79,764 | 319,056 | 4 |
| 36 | Կորտիզոլ 100 թեստ | լրակազմ | 5 | 94,860 | 474,300 | 5 |
| 37 | Տրիյոդթիրոնին T3 200 թեստ | լրակազմ | 2 | 68,544 | 137,088 | 2 |
| 38 | Տրիյոդթիրոնին FT3 200 թեստ | լրակազմ | 5 | 63,138 | 315,690 | 5 |
| 39 | Թիրոքսին T4 200թեստ | լրակազմ | 2 | 68,544 | 137,088 | 2 |
| 40 | Թիրոքսին FT4 ազատ 200 թեստ | լրակազմ | 10 | 63,138 | 631,380 | 10 |
| 41 | Թիրեոտրոպ հորմոն TSH 200 թեստ | լրակազմ | 15 | 63,138 | 947,070 | 15 |
| 47 | Կարցինո-էմբրիոնալ անտիգեն CEA 100 թեստ | լրակազմ | 2 | 95,574 | 191,148 | 2 |
| 49 | Ֆերիտին 100 թեստ | լրակազմ | 2 | 83,742 | 167,484 | 2 |
| 50 | Վիտամին B12 100 թեստ | լրակազմ | 2 | 95,778 | 191,556 | 2 |
| 51 | ՄԻԱՀ-ի ռեակտիվ HIV COMBI PT 100 թեստ | լրակազմ | 15 | 149,736 | 2,246,040 | 15 |
| 52 | Հեպատիտ C Anti-HCV | լրակազմ | 15 | 217,974 | 3,269,610 | 15 |
| 53 | Հեպատիտ B HBsAg 100 թեստ | լրակազմ | 15 | 72,726 | 1,090,890 | 15 |
| 58 | Բարձր զգայնության Տրոպոնին CS STAT | լրակազմ | 2 | 30,702 | 61,404 | 2 |
| 59 | ԱԿՏԳ CS | լրակազմ | 2 | 32,000 | 64,000 | 2 |
| **Ընդամենը** | | | | | **18,809,136** | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹՈՒՆԵԳՈՎՅԱՆ

ՀՀ 0337548

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-9/26-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Գնման առարկայի | | | |
|---|---|---|---|
| չ/հ | CPV և ապրանքի անվանումները | CPV կոդը | Վճարումը նախատեսվում է իրականացնել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2021թ. |
| 9 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Տպիչի թուղթ | 33691162/38 | 30,350 |
| 10 | **Լաբորատոր օժանդակ և գիտական նյութեր**/Հեղուկի ֆիլտր Filter Fluid D13.8 | 33691167/24 | 18,480 |
| 15 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ռեագենտ UF II Search-Sed (29mlX2) | 33691423/97 | 1,107,000 |
| 16 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ռեագենտ UF II Search-Bac (25mlX2) | 33691423/98 | 1,215,000 |
| 19 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կալիբրատոր UF II (2X47ml) | 33691423/101 | 540,000 |
| 20 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Combur- 10 UX | 33691162/39 | 4,536,000 |
| 28 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)**/Ռեակցիոն Տուբ | 33691162/42 | 180,000 |
| 30 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Բարձր զգայնության Տրոպոնին STAT100 թեստ | 33691423/116 | 116,790 |
| 31 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/ԱԿՏԳ 100 թեստ | 33691423/117 | 381,480 |
| 32 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Լյուտեինիզացնող հորմոն 100 թեստ | 33691423/120 | 214,200 |
| 33 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ֆոլիկուլոստիմուլացնող հորմոն 100 թեստ | 33691423/121 | 226,032 |
| 34 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/թեստոստերոն 100 թեստ | 33691423/123 | 319,056 |
| 36 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կորտիզոլ 100 թեստ | 33691423/125 | 474,300 |
| 37 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Տրիյոդթիրոնին T3 200 թեստ | 33691423/126 | 137,088 |
| 38 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Տրիյոդթիրոնին FT3 200 թեստ | 33691423/127 | 315,690 |
| 39 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Թիրոքսին T4 200թեստ | 33691423/128 | 137,088 |
| 40 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Թիրոքսին FT4 ազատ 200 թեստ | 33691423/129 | 631,380 |
| 41 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Թիրեոտրոպ հորմոն TSH 200 թեստ | 33691423/130 | 947,070 |
| 47 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Կարցինո-էմբրիոնալ անտիգեն CEA 100 թեստ | 33691423/141 | 191,148 |
| 49 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Ֆերիտին 100 թեստ | 33691423/145 | 167,484 |
| 50 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Վիտամին B12 100 թեստ | 33691423/146 | 191,556 |
| 51 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/ՄԻԱՀ-ի ռեակտիվ HIV COMBI PT 100 թեստ | 33691423/148 | 2,246,040 |
| 52 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հեպատիտ C Anti-HCV | 33691423/149 | 3,269,610 |
| 53 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Հեպատիտ B HBsAg 100 թեստ | 33691423/150 | 1,090,890 |
| 58 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/Բարձր զգայնության Տրոպոնին CS STAT | 33691423/158 | 61,404 |
| 59 | **Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ**/ԱԿՏԳ CS | 33691423/159 | 64,000 |
| **Ընդամենը** | | | **18,809,136** |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Բ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

AH 0337548